ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

Առաջիկայում կտեղադրվեն մի քանի նոր համակարգեր՝ բնապահպանական և անվտանգության ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով

04

Կրթավճարների փոխհատուցման նոր՝ առաջադիմությունը խթանող համակարգ

09

Ոսկիների մեծ մասը Սյունիքն է նվաճում. ոլորտի պատասխանատուները գիտեն գաղտնիքը

10

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
press@zcmc.am

№42 • 2024Թ.

ՄԵՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

Անվտանգության կանոնները պահպանելով՝ արձանագրվում են անհրաժեշտ արդյունքներ

07

Ընկերությունը ձգտելու է պահել առաջատար դիրքերը. «ԶՊՄԿ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Այն դեպքում, երբ 2022 թվականին Հայաստանի 1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված էին 8 հանքարդյունաբերական կազմակերպություններ, ապա 2023 թվականին դրանք արդեն 5-ն են: «ՀՀ տնտեսական զարգացման միտումները խոշոր հարկատուների տնտեսական բաշխման համատեքստում» թեմայով քննարկման ժամանակ Հանքագործների և մետալուրգների միության նախագահ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը՝ Տնտեսական լրագրողների ակումբում նշել է, որ ԶՊՄԿ-ն ցուցակի առաջին հորիզոնականում է վերջին երեք տարիներին: Մինչդեռ, 2014-21 թվականների ընթացքում ԶՊՄԿ-ն առաջատար է եղել ընդամենը մեկ տարի: **«Վերջին երեք տարիներին, նոր սեփականատիրոջ և նոր ղեկավարության նշանակումից հետո, մենք անընդհատ առաջատար ենք: Կոմբինատը գրանցում է ինչպես շահույթի, այնպես էլ վճարված հարկերի աճ»,** – ընդգծել է նա:

Ի տարբերություն ԶՊՄԿ-ի գրանցած ցուցանիշների, ոլորտում, ընդհանուր առմամբ, անկում է գրանցվել 2023 թվականին՝ 2022-ի համեմատ: 2023 թվականին ՀՀ խոշոր հարկատուների ցանկում, բացի ԶՊՄԿ-ից, ևս չորս հանքարդյունաբերական կազմակերպություն կա: Մինչդեռ, 2022 թվականի առաջին հարյուր խոշոր հարկատուների ցանկում եղել են ոլորտի ութ կազմակերպություններ: Այսինքն՝ նկատվում է էական նահանջ: Դրա համար կան և սուբյեկտիվ, և օբյեկտիվ պատճառներ: Ինչպես պարզաբանել է Վարդան Ջհանյանը, քանի որ հանքարդյունաբերությունը հիմնականում արտահանման ոլորտ է, դրամի փոխարժեքը մեծ ազդեցություն է ունեցել դրա վրա: **«Վերջին երեք տարիներին մենք տեսնում ենք դրամի արժևորում, ինչը բացասական մեծ ազդեցություն է ունենում մեր ոլորտի վրա: Դրամի արժևորումը դրական ազդեցություն ունի միայն ներմուծողների համար»,** – պարզաբանել է նա:

Հիշեցնենք, որ ըստ Պետեկամուտների

> *Հանքագործների և մետալուրգների միության նախագահն առաջարկել է ավելի ակտիվ զարգացնել արդյունաբերությունը և էներգետիկան, որոնք կարող են ապահովել երկարաժամկետ աճ:*

կոմիտեի տվյալների՝ 2023 թվականի արդյունքներով Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը գլխավորում է Հայաստանի խոշոր հարկատուների ցուցակը (երրորդ տարին անընդմեջ): Ընկերությունը 2023 թվականին պետական գանձարան է ուղղել 70.8 մլրդ դրամ: Վարդան Ջհանյանը ցանկալի է համարել երկարաժամկետ, որակյալ հիմքերի ստեղծումը երկրի տնտեսական աճի համար: Ներկա աճը, նրա խոսքով, կարող է լինել կարճաժամկետ, եթե արտաքին իրավիճակը կտրուկ փոխվի:
– **SS ոլորտը զգայուն է արտաքին փոփոխությունների հանդեպ, և եթե ինչ-որ սրացում սկսվի սահմանին, ապա այդ ոլորտի աշխատակիցների մեծ մասը կարող է արագ անցնել այլ երկրներ, ինչպես դա տեղի ունեցավ Ռուսաստանի դեպքում, և այդ ոլորտը Հայաստանի համար զրոյական նշանակություն կունենա: Բանկային ոլորտը նույնպես զգայուն է և կապված է Ռուսաստանի շուրջ իրավիճակի հետ:**
Հանքագործների և մետալուրգների միության նախագահը առաջարկել է ավելի ակտիվ զարգացնել արդյունաբերությունը և էներգետիկան, որոնք կարող են ապահովել երկարաժամկետ աճ:

1000 խոշոր հարկատուների ցանկը՝ անփոփոխ առաջատարով

Պետական եկամուտների կոմիտեն հրապարակել է 2023 թվականի 1000 խոշոր հարկատուների ցանկը: Առաջատարը դարձյալ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է, որն արդեն քանի տարի գլխավորում է խոշոր հարկատուների ցուցակը: Ընդ որում, ԶՊՄԿ-ի վճարած հարկերը մշտապես անհամեմատ շատ են նույնիսկ երկրորդ հորիզոնականում գտնվող ընկերությունից: 2023 թվականին ԶՊՄԿ-ն պետբյուջե է վճարել մոտ 71 մլրդ դրամ: Ցանկի հատկապես տասնյակում շատ ուշագրավ փոփոխություններ կան, որոշ դեպքերում՝ նույնիսկ անակնկալներ: Մարզական լեզվով ասած, տեղերով փոխվել են «արծաթե և բրոնզե մեդալակիրները»: Եթե 2022 թվականի ցուցանիշներով երկրորդ հորիզոնականում «Գազպրոմ Արմենիան» էր, երրորդը՝ «Գրանդ տոբակոն», ապա 2023 թվականի տվյալներով հակառակ պատկերն է: Հայաստանի տնտեսության բնորոշ ցուցիչներից է, որ 4-րդ և 5-րդ հորիզոնականներում են էլեկտրատեխնիկայի և բջջային հեռախոսների ներկրմամբ ու վաճառքով զբաղվող ընկերությունները՝ «Մոբայլ սենթրը» և «Փրիթի ուեյը» (Վեստա): Եթե առաջինը 2022 թ. համեմատ վեր է բարձրացել 3 հորիզոնականով՝ վճարած հարկերն ավելացնելով գրեթե կրկնակի, ապա երկրորդը՝ 17 հորիզոնականով՝ մոտ չորս անգամ ավելի վճարած հարկերով: 1000 խոշոր հարկատուների ամենամեծ «հայտնություններից» մեկը առցանց առևտրով զբաղվող «Վայլդբերիզ» ընկերությունն է, որը 2022 թվականի 346-րդ տեղից 2023 թվականի ցուցանիշներով հայտնվել է 6-րդ հորիզոնականում: 2023 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների տվյալներով 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառվել է 70 SS ընկերություն, որոնք պետբյուջեի համար ապահովել են 75 մլրդ դրամի եկամուտ՝ 44%-ով ավելի, քան նախորդ տարի: Առաջին անգամ տարեկան արդյունքներով հայկական բանկերը հայտնվել են լավագույն տասնյակում: Խոսքը «Ամերիաբանկի» և «Արդշինբանկի» մասին է, որոնք, համապատասխանաբար, 7-րդ և 8-րդ հորիզոնականում են:



2023 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների տվյալներով 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառվել է 70 SS ընկերություն, որոնք պետբյուջեի համար ապահովել են 75 մլրդ դրամի եկամուտ՝ 44%-ով ավելի, քան նախորդ տարի:

Առաջիկայում կտեղադրվեն մի քանի նոր համակարգեր՝ բնապահպանական և անվտանգության ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով

ՀՊՄԿ-ն դեռևս անցյալ տարի հայտարարեց այն մասին, որ ընթացքի մեջ է բնապահպանական ռիսկերի կառավարման արդիականացման ծրագիրը: Այս ծրագրի շրջանակներում, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը առաջիկայում նախատեսում է մի քանի նոր համակարգերի տեղադրում, որոնք էապես կբարելավեն բնապահպանական հնարավոր ռիսկերի կառավարումը:

Առաջին նորությունը վերաբերում է պոչամբարի կայունության վերահսկողությանը: Առաջիկա ամիսներին տեղադրվելու է նոր գեոսեյսմիկ համակարգ, որը թույլ է տալիս ցանկացած տեկտոնական կամ վիբրացիոն շարժման դեպքում, հասկանալ պոչամբարի զգայունությունը և դրա թույլատրելի շեղումների ցուցանիշները:

Այս պահին Հայաստան են ներկրվում իտալական սարքավորումներ, որոնք տեղադրվելու են տարբեր կետերում՝ մայրական գրունտի, պոչամբարի հարակից բնական լանջերի և պատվարի վրա: Ավտոմատ արձագանքման համակարգը գրանցելու է տվյալները, համեմատելու է թույլատրելի և ոչ թույլատրելի շեղումների ցուցանիշները և անմիջապես ուղարկելու է էլեկտրոնային հաշվետվություն: Ըստ էության, դա բարձրացնելու է պոչամբարի կայունության վերահսկողությունը, որի շնորհիվ հնարավոր կլինի էլեկտրոնային համակարգով գնահատել պոչամբարի պատվարի ցանկացած տատանում կամ շեղում:

Կայուն զարգացման ծրագրերից երկրորդ խոշոր միջոցառումը, որը հիմա իրականացվում է, ջրային թնդանոթների տեղադրումն է՝ փոշու կառավարման լավագույն պրակտիկային համահունչ: Առաջիկայում Չինաստանից կներկրվեն ջրի

Ճնշման տակ ջրի շիթային հեռահար հոսքի միջոցով՝ ջրի մոլեկուլներից փոշու վրա գոյանում է ամպ, որը թույլ չի տալիս փոշու տարածումը՝ շատ արագ այն նստեցնելով:

Լուսանկարը՝ Նվեր Զելյայի

շիթային թնդանոթներ, ինչպես ստատիկ, այնպես էլ՝ շարժական համակարգերով: Ձեռք է բերվել ծանր տեխնիկա, որոնց վրա կմոնտաժվեն թնդանոթները: Դրանք անմիջապես հորատման ընթացքում առաջացող փոշին տեղում նստեցնելու նպատակ ունեն: 2023 թվականին բացահանքում արդեն տեղադրվել է երեք թնդանոթ, որոնք շատ արդյունավետ են, ուստի որոշվել է դրանց թիվն ավելացնել:
Ինչ սկզբունքով է աշխատում ջրային թնդանոթը: Հաշվի առնելով քամու վարդը, այսինքն՝ հիմնական հոսքի ուղղությունը, թնդանոթները տեղադրվում են քամու ուղղության հակառակ, և ուժեղ ճնշման տակ ջրի շիթային հեռահար հոսքի միջոցով՝ ջրի մոլեկուլներից փոշու վրա գոյանում է ամպ, որը թույլ չի տալիս փոշու տարածումը՝ շատ արագ այն նստեցնելով: Ջրի շիթային թնդանոթներ կիրառվում են աշխարհի առաջատար հանքարդյունաբերական ընկերությունները, հնարավորություն տալով զգալիորեն նվազեցնել փոշու հոսքը հանքավայրից դուրս, և դրանով մեծապես դյուրացնել փոշու կառավարման խնդիրը:

2023-ին հարկերի 20 տոկոսը վճարել է խոշոր հարկատուների առաջին տասնյակը

Հայաստանի տնտեսական կառուցվածքի էական փոփոխություն տեղի չի ունեցել: Այս մասին «Հայաստանի տնտեսական զարգացման միտումները՝ խոշոր հարկ վճարողների տնտեսական բաշխվածության համատեքստում» թեմայով Տնտեսական լրագրողների ակումբի հրավիրած ասուլիսի ժամանակ ասաց Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանը: Նրա խոսքով՝ ներմուծման և արտահանման կառուցվածքը գրեթե մնացել է նույնը: Օրինակ՝ արտահանման առաջատար 15 ոլորտներն են՝ հանքարդյունաբերությունը, խմիչքները, ծխախոտը, հագուստեղենը, պահածոները և այլն: Ըստ Մակարյանի՝ Հայաստանում պաշտոնապես կա 63 700 իրավաբանական անձ, նրանց թվում 56 000-ը միկրո ձեռնարկություններ են: Նրանց 70 տոկոսն ուղղակի անհատներ են, այսինքն՝ նրանք էական տնտեսական ներդրում չունեն: *«Մենք ընդամենն ունենք մոտավորապես 7650 ընկերություններ, որոնք ստեղծում են տնտեսական կապիտալ և ունեն էական ազդեցություն մեր տնտեսության զարգացման ու նրա ուղղությունների վրա: Ցավոք, պետք է ասեմ, որ խոշոր հարկատուների ցանկում մենք դարձյալ փոփոխություններ չունենք: Հանքարդյունաբերությունն առաջին տեղում է, բնականաբար, առաջին տեղում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է»՝ մուծելով մոտավորապես 71 մլրդ դրամ հարկ: Այնուհետև առաջին տասնյակում գերակշռում է ծխախոտը, ավելացել և առաջ են մղվել բանկերը: Կառուցվածքի փոփոխություն չկա, ուղղակի վարկերի և տոկոսադրույքների ավելացման արդյունքում բանկերի ցուցանիշներն այնքան են լավացել, որ իրենք բոլորը համարյա դարձել են խոշոր հարկատուներ: Այսքան շատ խոսում ենք շինարարության մասին, շինարարական ընկերություններ կան առաջին հարյուրյակում, բայց շինարարական ընկերությունները դեռևս այնքան շրջանառություն չունեն, որ գան առաջ, նույնիսկ առաջին հիսունյակում շինարարական ընկերություններ չունենք»*, – ասաց նա:
Գագիկ Մակարյանը հավելեց, որ խոշոր հարկ վճարողների ցուցակում առաջին տասնյակը վճարում է բյուջեի հարկերի մոտավորապես 20 տոկոսը: *«Համեմատության համար նշեմ, որ Գերմանիայում առաջին տասնյակը վճարում է բյուջեի հարկերի մոտ 2,5 տոկոսը: Տեսեք, թե ինչ կտրուկ բևեռացում կա Հայաստանում: Խոշոր հարկատուների ցուցակի 1010 տնտեսվարողները վճարում են բյուջեի հարկերի 82 տոկոսը: Բոլորը միասին՝ 1010 տնտեսվարողները վճարում են 4 մլրդ դոլարի չափ հարկ: Այսինքն՝ մնացած մոտ 900 մլն դոլարը վճարում են մնացած բոլոր ընկերությունները»*, – նշեց Մակարյանը:



Կոմբինատի կարևոր մարդիկ

ՆՈՒՆԵ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
«ԶՊՄԿ» ՓԲԸ վարչատնտեսական բաժնի մառանապահ, մաքրության պատասխանատու

Գրեթե բոլոր ընկերություններում կան այնպիսի համեստ մարդիկ, ովքեր իրենց աշխատանքում, թվում է՝ անտեսանելի են, մինչդեռ ամենակարևոր գործն են կատարում: Խոսքը մաքրություն պահպանողների և այլ աշխատանքներ իրենց վրա վերցրած բանվորների մասին է:

ԶՊՄԿ-ում ևս կան այդպիսի նվիրյալներ: Հանրապետության ամենախոշոր հանքարդյունաբերական ձեռնարկության էսթետիկայի արտադրամասի ու վարչատնտեսական բաժնի բեռնակիրներին ու հավաքարարներին ենք անդրադարձել: Քչերը գիտեն, որ «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի արդյունաբերական արտադրամասերից բացի կա էսթետիկայի արտադրամաս: Այս նուրբ անվան ներքո իրականում ֆիզիկապես ուժեղ տղամարդիկ են աշխատում, ովքեր ամենօրյա իրենց գործով նպաստում են, որ արտադրական ողջ շղթան հանկարծ չխաթարվի: 30 հոգանոց այս կոլեկտիվը իրականում ձեռնարկության շտապ օգնությունն է: Նրանք բեռնակիրներ են, եռակցողներ, փականագործներ և տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, ովքեր պարզապես կատարում են աշխատանքներ, որոնք խիստ անհրաժեշտ են լինում տվյալ պահին: Երբեմն ծառահատման աշխատանքներ են կատարում, երբեմն՝ ձյան մաքրման: **«Մեկ-մեկ իմ շրջապատում ասում եմ՝ մենք կոմբինատի 911-ն ենք,** – ասում է «ԶՊՄԿ» ՓԲԸ էսթետիկայի արտադրամասի պետ Արամ Խաչատրյանը: **«Տեղահանված արցախցիներին օգնելու նպատակով մեր տասը աշխատակիցներ տասը օր շարունակ եղել են Գորիսում՝ օգնել սնունդ մատակարարել, իսկ Քաջարանի ու Կապանի տարածաշրջանների գյուղերում ապաստանած արցախցի ընտանիքներին էլեկտրատեխնիկա ու գույք ենք տրամադրել՝ ապահովելով նրանց կարիքները»,** – նշում է արտադրամասի պետը: 18 տարվա աշխատակից Մեր Համբարձումյանը վստահ է՝ օրական մի քանի տասնյակ թթվածնի բալոնների մատակարարումը հեշտ գործ չէ: Ասում է, եթե թթվածին չհասցնես, մարդիկ չեն կարողանա աշխատել: Եռակցելիս, կտրելիս հատկապես շատ կարևոր է: Գիտի երբ, որտեղ ու ինչքան պետք է

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«ԶՊՄԿ» ՓԲԸ էսթետիկայի արտադրամասի պետ

ՄԵՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
«ԶՊՄԿ» ՓԲԸ էսթետիկայի արտադրամասի աշխատակից

Երբ աշխատասենյակները դատարկվում են, գործի են անցնում մի խումբ արագաշարժ կանայք: Այնպես են կարգի բերում ամբողջը, որ թվում է՝ ոչ ոք այստեղ ոտք չի դրել:

ԱԼՎԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«ԶՊՄԿ» ՓԲԸ վարչատնտեսական բաժնի հավաքարար

ԱԼԻՍԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
«ԶՊՄԿ» ՓԲԸ վարչատնտեսական բաժնի հավաքարար

ՆՈՒՆԻԿ ԱԹԱՅԱՆ
«ԶՊՄԿ» ՓԲԸ վարչատնտեսական բաժնի հավաքարար

հասցնեն: Համավարակի օրերին էլ ԲԿ-ների համար շատ կարևոր թթվածին են հասցրել: Էսթետիկայի արտադրամասի երկարամյա աշխատակից Նարեկ Ներսիսյանը գոհ է, որ աշխատանք ունի: Ասում է՝ ինքն իր գործը լավ

ՆԱՐԵԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ
«ԶՊՄԿ» ՓԲԸ էսթետիկայի արտադրամասի աշխատակից

գիտի: Ձգտում է աշխատանքային ժամերը արդյունավետ օգտագործել, որ գործընկերներն էլ իրենց գործը անեն: Ասում է անվտանգության կանոններին քաջատեղյակ է, հետևում է անվերապահորեն: Վարչատնտեսական բաժնի հավաքարարները համոզված են՝ չկա մաքրություն, չկա կոմբինատի արդյունավետ աշխատանք: Իրենց արածը օդ ու ջրի պես անհրաժեշտ է թղթերի, թվերի հետ գործ ունեցող մասնագետների համար: Սրա հետ համաձայն են բոլորը: Երբ աշխատասենյակները դատարկվում են, գործի են անցնում մի խումբ արագաշարժ կանայք: Այնպես են կարգի բերում ամբողջը, որ թվում է՝ ոչ ոք այստեղ ոտք չի դրել: «ԶՊՄԿ» ՓԲԸ վարչատնտեսական բաժնի հավաքարար Ալվարդ Հայրապետյանը բարեխիղճ աշխատանքի համար կոմբինատի հոբելյանական 70-ամյակի առթիվ այս տարի դրամական պարգև է ստացել: **«21 տարի է արդեն՝ աշխատում եմ: Ղեկավարներ են փոխվել. իրենք ինձնից են գոհ, ես իրենցից: Պետք է ուշադիր լինես. պատասխանատու է մեր գործը: Երբ քեզ լավ են վերաբերվում, ձգտում ես ավելի լավ աշխատել, որ քեզնից գոհ լինեն»,** – նշում է նա: **«Տնից դուրս ես գալիս, ցրվում ես, առօրյա հոգսերից կտրվում: Կինը պարտադիր պետք է աշխատի, երիտասարդ ես մնում: Այս տարիների ընթացքում կոլեկտիվ եմ ձեռք բերել»**, – ասում է հավաքարար Նունիկ Աթայանը: Կոմբինատի մոտ հինգ հազարանոց ընտանիքի մաս է կազմում կանանց այս փոքրիկ կոլեկտիվը:
2024 թվականին գլխավոր ակնկալիքը խաղաղությունն է: Բարեմաղթանքները այսպես են սկսվում ու ավարտում:

Հերմինե Միքայելյան

Մեր մասնագետները

Սերժիկ Ղազարյանը պատմում է, որ սկզբից ևեթ սիրել է մասնագիտությունը, կարողացել է կարճ ժամանակում տիրապետել հմտություններին՝ աշակերտելով տեղամասի հմուտ վարպետ Վլադիկ Ղահրամանյանին: Այժմ արդեն 29 աշխատանքային փորձառության տարիներ են ետևում և Սերժիկն ինքն է նորեկներին խորհուրդներ, վարպետության դասեր տալիս:



Սերժիկ Ղազարյանը ԶՊՄԿ աշխատակից է 1995 թվականից, մեխանիկական արտադրամասի ձուլման տեղամասի հալող-ձուլող է:

Հսկա վառարանի մոտ հմուտ վարպետի ձեռքում կարծր մետաղները /պողպատ, թուջ և բրոնզ/ ջերմային մշակման են ենթարկվում ամենօրյա ռեժիմով՝ արտադրությանն անհրաժեշտ դետալներ ստանալու համար: Անվտանգ աշխատելը, զգոնությունն առաջնային պայմաններ են, գործ ունենք բարձր ջերմաստիճանի հետ, գիտակցաբար և անվտանգության կանոնները պահպանելով են միայն արձանագրվում անհրաժեշտ արդյունքներ: Սերժիկ Ղազարյանի երեք տղաները ևս, կոմբինատի աշխատակիցներ են, ընտանեկան քննարկումները հաճախ նաև մասնագիտական թեմաների շուրջ են ծավալվում, չէ որ տարածաշրջանում կոմբինատն ամեն ընտանիքում է, գրեթե յուրաքանչյուրի տանը:

Փորձություններ հաղթահարող կամ զորացնող հավատարմություն...

Քաջարանցի Աշխեն Ավանեսյանի մարդկային տեսակն ու բարոյական նկարագիրը հատկապես արտահայտվեց, երբ օրիորդի ընտրյալը՝ համաքաղաքացի երիտասարդ Վարդան Վարդանյանը 2020-ի հոկտեմբերին ռազմաճակատից լուրջ վիրավորում ստացած՝ տեղափոխվեց հիվանդանոց:

Տեսանյութը դիտելու համար սքանավորեք QR կոդը

Հայրենիքի կանչով առաջնագիծ մեկնած զինվորը, ցավոք, գրկվեց ոտքից:
26 տարեկանում նա հայտնվեց լրջագույն մարտահրավերի առջև, որը միայն խոսքերով չէ, որ պետք էր հաղթահարել և ամեն գնով առաջ գնալ: Հարազատների հետ մեկտեղ՝ Վարդանի կողքին ամեն պահ Աշխենն էր... Ծանոթացել են պատահական, Վարդանը լավ է հիշում այդ օրը, երբ Աշխենին տեսել է առաջին անգամ, ուրախ ու ժպտերես աղջիկն անմիջապես գրավել է երիտասարդի ուշադրությունը: Աստիճանաբար համակրանքը փոխադարձ է դարձել, զգացմունքները՝ խորացել ու ամրապնդվել են:
– Կյանքը շարունակվում է, մարդիկ ապրում են կամ փորձում առօրյան կազմակերպել, ես ճակատագրի կամ մարդկանց նկատմամբ չարացած չեմ, կարող էր ավելի վատ լինել: Ուղղակի պետք է նոր իրավիճակին հարմարվել և առաջ նայել:

> *Ծանոթացել են պատահական, Վարդանը լավ է հիշում այդ օրը, երբ Աշխենին տեսել է առաջին անգամ, ուրախ ու ժպտերես աղջիկն անմիջապես գրավել է երիտասարդի ուշադրությունը: Աստիճանաբար համակրանքը փոխադարձ է դարձել...*

Վարդանը ձեռնարկության հատուկ ծրագրերի բաժնում է աշխատում:
– Սկզբում ամեն բան դժվար էր տրվում: Օրեր շարունակ անքնությամբ եմ տառապել, – հիշում է Վարդանը, **– անհանգիստ էի եղբորս համար, նա ևս առաջնագծում էր, նույն օրն էինք**

մեկնել: Բարեբախտաբար, գոնե նրա մոտ ամեն բան կարգին էր... Հարկավոր էր բռունցքվել, ի մի բերել ողջ կամքդ, շարունակել ապրել նորովի, արդեն նոր իրականության մեջ...

– Վարդանի վիրավորվելու մասին լուրը ստանալուն պես՝ Երևան շտապեցինք,– պատմում է աղջիկը,

– համոզված էի, որ անում եմ կյանքիս ամենապատասխանատու և ճիշտ քայլերից մեկը, նաև գիտակցում էի, թե ինչքան շատ էր նա զգում իմ կարիքը...

– Անհամբեր, կասեի՝ սրտատրոփ, սպասում էի, թե երբ կբացվի հիվանդասենյակի դուռը և ներս կմտնի Աշխենը, – հավելում է Վարդանը,– **նրանից շատ բան էր կախված: Շնորհակալ եմ ճակատագրից, երջանիկ, որ կողքիս նման մարդ ունեմ, ով եղել և շարունակում է մնալ, անգամ ամենածանր պահերին, սատարել, հուսադրել է ինձ և հավատացրել, որ մենք կարող ենք ու պարտավոր ենք պայքարել հանուն կյանքի, սիրո ու մեր համատեղ ապագայի: Ամեն բան օրեցօր դեպի լավն է գնում, այժմ մենք մեկ ամբողջություն ենք, դա այնքան ուժ է տալիս, որ պատրաստ եմ անհնարինին՝ միայն նրան ուրախություն պարգևելու և երջանիկ տեսնելու համար:**

– Բարեբախտաբար, վերապրելով անցածը, ասում ենք. փառք քեզ Տեր Աստված, որ Վարդանը ողջ է, մեր կողքին, և որ այս ծանր փորձությունն ավելի համախմբեց ու միահյուսեց բոլորիս, դարձրեց ավելի վճռական և ամուր, իսկ մնացյալը՝ լուծում ունեցող հարցեր են... կլուծենք... – վստահաբար հավելում է Աշխենը:

...Նրանք չպարտվեցին իրենց բաժին պատերազմի ոչ առաջնագծում, ոչ էլ՝ կյանքի քառուղիներում, միմյանց զորավիգ լինելով, վստահաբար, կյանքի հորձանուտն են մտել հաղթելու վճռականությամբ, այլ նպատակ՝ դժվար կլիներ պատկերացնել... Իսկ 9 ամսական դուստրը՝ Արփին, նոր ուժ է հաղորդում երիտասարդ զույգին, սիրով լցնում նրանց ամեն օրը...

Լիլիթ Իսրայելյան
2024 թ., Քաջարան

Կրթավճարների փոխհատուցման նոր՝ առաջադիմությունը խթանող համակարգ

2023 թվականի հունվարից «ԶՊՄԿ» բարեգործական հիմնադրամը ներդրել է կրթավճարների փոխհատուցման նոր համակարգ: Նոր կարգի մանրամասները ներկայացնում է «ԶՊՄԿ» բարեգործական հիմնադրամի հաշվապահ Անուշ Պետունցը:

Նախկինում հիմնադրամը փոխհատուցում էր ընկերության աշխատակիցների, նրանց ընտանիքի մեկ անդամի տարեկան ուսման վարձի կեսը, հաջորդ կեսը վճարում էր Ընկերությունը՝ աշխատակցի կողմից մաս-մաս վերադարձնելու պայմանով:

2022-23թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից փոփոխված կարգի համաձայն՝ փոխհատուցումն իրականացվում է առաջադիմության թերթիկի արդյունքներին համարժեք չափով *(Ինֆոգրաֆիկա 1)*:

Պարզեցնելու համար նշենք, որ նախկինում՝ անկախ ուսանողի առաջադիմությունից, հիմնադրամը վճարում էր ուսման վարձի միայն կեսը, իսկ մնացածը վճարում էր ծնողը:

Նոր կարգով նույնպես փոխհատուցվում է բոլոր ուսանողների տարեկան վարձի 50 տոկոսը, իսկ բարձր առաջադիմություն ունեցողների դեպքում՝ վարձի մինչև 100 տոկոսը: Ստացվում է, որքան բարձր է առաջադիմությունդ, ուսմանդ վարձից այնքան շատ մաս է փոխհատուցվում: Կան շատ ուսանողներ, ովքեր առաջին կիսամյակում ստացել են միայն բազային՝ 50 տոկոսի չափով փոխհատուցում, սակայն հաջորդ կիսամյակում բարձրացրել են ՄՈԳ-ը և արժանացել ուսման վարձի ամբողջական փոխհատուցման:

Այս նոր կարգով ավելացել է կրթավճարների փոխհատուցման ընդհանուր ծավալը. եթե 2021 թվականին այդ նպատակով հիմնադրամը տրամադրել էր 254 միլիոն դրամ, ապա 2023 թվականին այդ թիվը հասել է 337 միլիոնի:

Ինֆոգրաֆիկա 1

ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ (ՄՈԳ) ԴԵՊՔՈՒՄ

Մինչև 69% ՄՈԳ-ի դեպքում *փոխհատուցման չափը՝ ուսման վճարի 50%*



Մինչև 89% ՄՈԳ-ի դեպքում, *փոխհատուցման չափը՝ ուսման վճարի 70%:*

90% և ավելի ՄՈԳ-ի դեպքում, *փոխհատուցման չափը՝ ուսման վճարն ամբողջությամբ:*

Կտրուկ ավելացել է նաև դիմողների թիվը՝ 2021 թվականին ուսման փոխհատուցում ստանալու համար հիմնադրամ դիմել է 1170 ուսանող, իսկ անցած տարի՝ 1750:

Ներդրված բանաձևն ամբողջությամբ արդարացրել է նպատակը: Սրանով մենք խրախուսում և խթանում ենք առաջադիմությունը:

Ոսկիների մեծ մասը Սյունիքն է նվաճում

Կապանում քիքբոքսինգը գնալով գրավիչ է դառնում պատանիների համար: Մարզաձևի սիրահարները տարեցտարի նորանոր հաջողություններ են գրանցում՝ բարձր պահելով թե Սյունիքի, և թե Հայաստանի պատիվը: Ինչպե՞ս է հաջողվում սյունեցի մարզիկներին տարբեր մրցաշարերում նվաճել ոսկե մեդալների մեծ մասը ու գրեթե միշտ վերադառնալ հարուստ ավարով. ոլորտի պատասխանատուները գիտեն գաղտնիքը:

Փետրվարի 15-18-ը Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում տեղի ունեցած Եվրոպայի գավաթի առաջնությանը Հայաստանի հավաքականի կազմում ընդգրկված էր միայն «Սյունիք» ակումբը: Մեր երկիրը ներկայացնող 10 սյունեցի մրցեցին քաշային վեց կարգում: Ընդհանուր առմամբ, Հայաստանը նվաճեց 9 մեդալ՝ 2 ոսկի, 2 արծաթ և 5 բրոնզ: Զագրեբում կայացած առաջնությանը մասնակցում էին 39 պետությունից ժամանած շուրջ 2500 մարզիկ:

Տարբեր մարզաձևերին զուգահեռ Կապանում տարեցտարի զարգանում է նաև քիքբոքսինգը՝ գրավելով ավելի շատ պատանիների: Մեկ տարի առաջ կապանյան երկու թիմերի միավորման արդյունքում քիքբոքսինգ մարզաձևի ցուցանիշները սկսեցին ավելի աճել: Վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանի և ֆեդերացիայի փոխնախագահ Վիկտոր Խաչատրյանի համատեղ աշխատանքի շնորհիվ՝ պատանիները նոր թափով սկսեցին հաղթանակներ գրանցել:

Տասը տարվա քրտնաջան պարապմունքների արդյունքում երեսուն ոսկի ու արծաթ է նվաճել Վաչե Գյուլբուդաղյանը: Նա ակումբի առաջին սաներից է, ով առաջին իսկ օրվանից հավանեց սպորտաձևը և մինչ օրս էլ մեկը մյուսի հետևից հաղթանակներ է բերում Սյունիքին ու Հայաստանին:

14-ամյա Մարկ Միքայելյանի ներուժը բացահայտվեց Հայաստանում կայացած տարբեր մրցաշարերի ընթացքում: **«Մրցակցին երկու անգամ նոկաուտով գետնին եմ տապալել ու հաղթել: Տպավորիչ մենամարտեր էին: Դրսում ոսկի նվաճելու զգացողությունից լավ բան չկա», –** ասում է պատանին:

Այն, որ Սյունիքը քիքբոքսինգի հանրապետական ու միջազգային մրցաշարերից հարուստ ավարով է վերադառնում՝ փաստում են թվերը: Այս առումով մարզիչները հատկապես առանձնացնում են 2023 թվականի գլխավոր իրադարձությունը՝ Թուրքիայում կայացած Եվրոպայի առաջնությունը, որը աննախադեպ էր: **«Հայաստանի թիմը երկու արծաթ ու երեք բրոնզ բերեց: Եվ սա սյունեցի մարզիկների շնորհիվ»,** – ընդգծեց ՀՀ քիքբոքսինգի ֆեդերացիայի նախագահը:

Գառնիկ Հայրապետյանի խոսքով.

– **Քիքբոքսինգի հինգ դասային կարգում Սյունիքի մարզիկները իրենց ոճում լավագույնն են: Մարզիչների աշխատանքից բացի, մեծ դեր ունի կայուն ֆինանսավորումը,** – ասում է ֆեդերացիայի նախագահը:

«Շատ եմ կարևորում, որ մրցաշարը անցկացվեց հենց Թուրքիայում, քանի որ տղաները, երբ պատվո պատվանդանին կանգնեցին, իրենց թիկունքում ՀՀ դրոշն էր: Շատերն անգամ կասկածում էին, որ Թուրքիայից մեդալներ

կբերենք, մեզ դա հաջողվեց: Ինչ վերաբերում է Ֆինանսավորմանը, ապա շատ կարևոր է ԶՊՄԿ-ի աջակցությունը: Եթե չլիներ կոմբինատի կայուն ֆինանսավորումը, ապա մարզիկները այս տարիների ընթացքում չէին կարող անգամ վարկանիշ ձեռք բերել: Կոմբինատի դերը մեծ է հաջողությունների հասնելու գործում», – նշեց Գառնիկ Հայրապետյանը:

ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Կարեն Գիլոյանը համոզված է, որ նվիրված աշխատանքը տալիս է ցանկալի պտուղներ:

«Քիքբոքսինգի Սյունիքի մասնաճյուղը ֆեդերացիայի մյուս մասնաճյուղերի համեմատ ամենաբարձր արդյունքն է ցույց տալիս: Չտեղայնացնենք, պետք է այնպես աշխատել, որ նպատակը մեկը լինի՝ Հայաստանի Հանրապետության անունը բարձր պահել, բարձրացնել մեր դրոշը՝ պետական օրհներգի հնչյունների ներքո. ով կանի դա՝ փառք ու պատիվ իրեն, ապրի ինքը», – եզրափակեց խոսքը Կարեն Գիլոյանը:

Հերմինե Միքայելյան

Ընկերության արտադրական հանգույցների հնարավոր բնապահպանական ազդեցության նվազեցում բնապահպանական ռիսկերի կառավարման միջոցով

Այս տեսլականն է որդեգրել ԶՊՄԿ-ն: Համակարգն առաջին անգամ սահմանվել և կիրառվել է Մեծ Բրիտանիայում՝ արդյունահանողների նախաձեռնությամբ, ովքեր բախվել էին բնապահպանական խստացված օրենսդրությանը: Եվ համակարգը կիրառելու նպատակով ընկերության կողմից առաջին քայլերն արվել են 2017-ին: Կառավարման համակարգի մեզ տված հնարավորությունները.

Շրջակա միջավայրի պահպանություն

- Նվազեցնում է բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Ռեսուրսների, ծախսերի խնայողություն

- Արդյունավետության բարելավում:

Համապատասխանություն

- Իրավական նորմերի և ընկերության կողմից ստանձնած այլ պարտավորությունների համապատասխանություն:

Հեղինակության բարձրացում

- Ընկերության վարկանիշ, շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ և այլն:

Կառավարման համակարգի ներդրման գործընթացի հիմքում շարունակական բարելավումն է: Կարևոր է նաև, որ ընկերության յուրաքանչյուր աշխատակից գիտակցի իր աշխատանքի շրջանակներում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված գործողությունների կարևորությունը և այն ապահովի առօրյա աշխատանքների ընթացքում:

Բնապահպանական քաղաքականությունն իրականացնելիս՝ ԶՊՄԿ-ն հանձն է առնում՝

Ներդնել ԲԿՀ՝ միջազգային և ոլորտի լավագույն փորձին համապատասխան.

- Բարելավել հիմնական կատարողական ցուցանիշները – էներգիայի, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործում, թափոնների և ջրային ռեսուրսների կառավարում, մթնոլորտային օդ արտանետումների նվազեցում:
- Պարբերաբար իրականացնել ներքին աուդիտ և ներկայացնել այն՝ կատարողականի վերաբերյալ:
- Քաղաքականության արդյունավետությունն ապահովելու համար աշխատակիցներին և կապալառուներին վերապատրաստել և ներկայացնել իրենց պարտականությունները՝ ՀՀ օրենսդրական պահանջներին, ISO 14000 ստանդարտներին և ընկերության պահանջներին համապատասխան:
- Բացահայտել և կառավարել ռիսկերը՝ շրջակա միջավայրի պաշտպանությունն ապահովելու համար:

Այս քաղաքականությունը կիրառելի է ընկերության ողջ անձնակազմի նկատմամբ:

Դեռևս 2021 թվականին ընկերությանը ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ է տրվել ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի կողմից առ այն, որ ընկերության կողմից ներդրված բնապահպանական կառավարման համակարգը համապատասխանում է ISO 14001:2015 «Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց» միջազգային ստանդարտի պահանջներին:

Մեղրու պաշտպանական կառույցները

Լուսանկարը՝ Սոս Դավթյանի

Միջնադարյան Հայաստանի պաշտպանական կառույցներից ուշագրավ իր ճարտարապետական լուծումներով՝ առանձնանում է Մեղրու բերդը:

Բերդի մասին առաջին պատմական տեղեկություններ հանդիպում ենք Ստ. Օրբելյանի մոտ, ըստ որի 1083 թվականին բերդն արդեն կանգուն էր, և կառուցման տարեթիվը հստակ հայտնի չէ: Սակայն հնարավոր ենթադրվող ժամանակաշրջանը՝ Սյունիքի թագավորության ստեղծման և հզորացման տարիներն են՝ 10-րդ դարի վերջ և 11-րդ դարի սկիզբ: Մեղրու բերդը հետագա դարերում չի հիշատակվում, բայց այն անշուշտ առանցքային դերակատարում է ունեցել Սյունիքի հարավային գավառում՝ Արևիքում տեղի ունեցած պատերազմական գործողություններում: Բնականաբար, կառույցը ենթարկվել է ավերածությունների և վերակառուցվել է, ինչի արդյունքում՝ պատկերացնել նախնական հորինվածքը հնարավոր չի եղել: Մեղրին նորից պատերազմների թատերաբեմ է դառնում 18-րդ դարի սկզբին՝ Ղափանի անկախ իշխանության կողմից թուրք նվաճողների դեմ մղվող կռիվների ժամանակ: Թուրքական զորքերի հարձակմանը դիմագրավելու համար պետք էր, որ մինչ այդ Դավիթ Բեկը Մեղրու բերդը վերակառուցած լիներ, որն անհրաժեշտ էր նրան «...Ռազմական նոր տեխնիկայի և հատկապես հրազենի օգտագործման կապակցությամբ» (Ս.Խ. Մնացականյան «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը):

Բերդը բաղկացած է 6 աշտարակից, որոնք բարձրանում են Մեղրու Մեծ թաղի հյուսիսային կողմում: Երկու լեռնաշղթաներ հատվելով հյուսիսում, ստեղծում են եռանկյունաձև գոգավորություն, որի հարավային լանջին տեղակայված է Մեղրի ավանը: Լեռնաշղթաների դժվարամատչելի գագաթների վրա կառուցված են բերդի աշտարակները:

Մեղրու բերդի աշտարակները հատակագծով և տարածական ձևերով երկու տեսակ են. կլոր և ուղղանկյուն: Վեցն էլ կառուցված են նույն շինանյութից. կոպտատաշ և անմշակ գրանիտե քարերից: Պատերի մեջ՝ որպես սեյսմիկ գոտիներ, օգտագործված են փայտե հեծաններ՝ դրված աշտարակի ամբողջ պարագծով, մի քանի շարքով: Աշտարակների պատերը դեպի վեր նեղանում են. հիմքի մոտ ունեն 0.9-1.0 մ լայնություն, իսկ գագաթին՝ 0.7 մ.: Նեղացումը կատարվում է դրսից, ներսում պատերն ուղղաձիգ են: Ճարտարապետական այս լուծումն ուժեղացնում է աշտարակների կայունությունը, նման լուծումների հանդիպում ենք նաև 10-12-րդ դարերի հայկական ամրոցաշինության մեջ՝ Բջնի, Ամբերդ, Կիլիկիայի մի շարք ամրոցներ:

Ըստ Ստ. Օրբելյանի, 1083 թվականին բերդն արդեն կանգուն էր, և կառուցման տարեթիվը հստակ հայտնի չէ: Սակայն հնարավոր ենթադրվող ժամանակաշրջանը՝ Սյունիքի թագավորության ստեղծման և հզորացման տարիներն են՝ 10-րդ դարի վերջ և 11-րդ դարի սկիզբ:

Թե ուղղանկյուն, և թե կանգուն կլոր աշտարակները երկհարկանի են եղել: Այսպիսի եզրակացության համար հիմք են ծառայում պատերի մեջ պահպանված միջհարկային ծածկերի փայտե հեծանների հետքերը և այն հանգամանքը, որ հրակնատների շարքերը դասավորված են ըստ հարկերի՝ երկուական շարք ներքևում և վերևում: Հարկերի բարձրությունները երկու մետրի սահմաններում են: Դեպի երկրորդ հարկ տանող աստիճանները հավանաբար փայտյա են եղել: Հրակնատների շախմատաձև դասավորությունը հնարավորություն է տվել առավելագույն օգտագործել պատը ըստ երկարության և բարձրության: Օրինակ՝ արևելյան ուղղանկյուն աշտարակից միաժամանակ կարող են կրակել 70 հրաձիգ: Կրակի այդպիսի



Լուսանկարը՝ Սոս Դավթյանի

կենտրոնացումը, առավել ևս փոքր պաշտպանական կառուցվածքում, 18-րդ դարի ռազմական տեխնիկայի դեպքում ստեղծում է հզոր հարվածային ուժ, մանավանդ տեղադրված լինելով լեռնաշղթայի բարձր կատարներին, աշտարակներն անմատչելի են թնդանոթների կրակի համար:
Իր ճարտարապետությամբ Մեղրու բերդն ուրույն տեղ է գրավում Հայաստանի պաշտպանական կառուցվածքների շարքում: Իր տեսակի մեջ սակավաթիվ օրինակ է, հիմնովին վերակառուցվել է 18-րդ դարում:
Իսկապես, 14-17-րդ դարերում, երբ Հայաստանը վերջնականապես կորցրեց իր անկախությունը՝ դառնալով հարևան պետությունների համար ռազմադաշտ՝ երկրում բացարձակ հնարավորություն չկար կառուցելու հայկական բերդեր և ամրոցներ:
Եվ միայն Ղափանի անկախ իշխանության կարճատև գոյությունը հնարավորություն տվեց Սյունիքում վերանորոգել և օգտագործել մի քանի անառիկ, պաշտպանական կառույցներ՝ Բաղաբերդ, Մեղրի, Հալիձոր:
Մեղրու բերդի առանձնահատկություններից է այն, որ այն՝ հայկական ճարտարապետության մեջ հայտնի միակ պաշտպանական կառուցվածքն է՝ հրազենի օգտագործումը հաշվի առնելով:
Բերդը տարբերվում է նախորդ բոլոր պաշտպանական կառույցներից իր կառուցապատման կառուցվածքով. առանձին կանգնած աշտարակներ են՝ առանց պարսպապատերի:
Մեղրու բերդը պարսպապատված չէ, քանի որ լեռնաշղթաներն իրենք են որպես պարիսպ ծառայել, բնակավայրը ոչ թե աշտարակների միջև է գտնվում, այլև՝ նրանց հարևանությամբ:


Լուսանկարը՝ Սոս Դավթյանի

Մեղրու բերդի պաշտպանական այս հիանալի հատկությունների շնորհիվ է, որ 1723 թվականին չորս հարյուր հոգով պաշարված լինելով թուրքական տասնյակ հազարանոց բանակի կողմից, Դավիթ Բեկի համախոհները հինգ օր անընդհատ դիմադրել են թշնամու գրոհներին՝ մինչ հիմնական զորքերի Մեղրի հասնելը և թշնամու զորքերի ետ մղելը:
Եվ իրավամբ, Մեղրու բերդը կարելի է համարել ուշ միջնադարի հայկական ամրոցաշինության նվաճումը:

Մշակումը՝ Լիլիթ Իսրայելյանի
Սկզբնաղբյուրը՝ «Արաքս» շաբաթաթերթ

«... յաշտարակս կամ ի մանր բերդորայս, գորս յիշէր վերոյդրեալ ուղեւորն (Տիւպուա) և որք ակաւին փոքր ի շատէ կանգուն կան ի կատարս բլրոց պատելոց զշինիւն, և քաջ ամուր վայր յարդարեն զաղանն, վասն որոյ և կոչի Մեղրոյ բերդ»
Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893 թվական, էջ 303



Հինգ, թե՞ հիսուն հազար տարեկան եղջյուր

1975 թ. Կապան-Քաջարան ճանապարհահատվածից գտնվել և Կապանի երկրագիտական թանգարան էր հանձնվել եղջյուր, որը մինչ օրս համարվում էր բրոնզեդարյան ցուցանմուշ: Հիմա՝ կես դար անց եղջյուրի շուրջ հարցեր են ծագել:

Զուբր, եվրոպական անտառային վայրի ցուլի եղջյուր (Բաղաբերդ, մեզանից մոտ 50-30 հազար տարի առաջ)

Եղջյուրի տարիքը, նոր ուսումնասիրությունների համաձայն, հաստատ գերազանցում է հինգ հազարամյակը, բայց հնարավոր է նույնիսկ՝ 50 հազար տարվա հնություն ունի: Թանգարանի տնօրեն Այլոշա Հայրապետյանի խոսքով՝ կասկածն առաջացել է, երբ ձեռքով շոշափել է եղջյուրը և զգացել, որ դրա ոսկրանյութը չափազանց կարծր է, հետևաբար՝ չափազանց հին: Եղջյուրն այժմ ցուցադրվում է սրահի մուտքի մոտ, մինչև եղջյուրի տարիքի վերաբերյալ կասկածը, ամենահինը ցուցանմուշներից համարվում էր 4 հազար տարեկան աղորիքը, դրա կողքին Արգիշտի արքայի անունը հիշատակող սեպագրով ձիու ճակատակալն էր: Եղջյուրը հետաքրքրություն է առաջացրել Հայաստանի ականավոր պատմաբանների շրջանում, և նախնական ուսումնասիրություններից հետո, գիտահետազոտական խումբը ցուցանմուշից վերցված բեկորներն ուղարկել է արտասահման՝ լրացուցիչ հետազոտությունների:

Բելառուսում գենետիկ հետազոտությամբ որոշվելու է, թե ինչ կենդանու եղջյուր է այն, Լեհաստանում էլ, նորագույն տեխնոլոգիաների միջոցով, որոշվելու է դրա տարիքը: Այլոշա Հայրապետյանն ասում է՝ գտածոյի ուսումնասիրությունը, անգամ իր վարկածը չհաստատվելու դեպքում, անհրաժեշտություն է, քանի որ այն կարող է առնվազն 5 հազար տարի առաջ այստեղ ապրած մեր նախնիների կենցաղի մասին որոշակի տեղեկություն տալ: Թանգարանի անձնակազմը փնտրում է այն մարդուն, ով նվիրաբերել է եղջյուրը թանգարանին: Հայտնի է միայն, որ նվիրաբերողը 1975 թ. աշխատել է Կապան-Քաջարան մայրուղու շինարարությունում, անունը՝ Անդրանիկ Մարգարյան:

– Մենք մի շարք հարցեր ունենք այն մարդուն, ով գտել է այս եղջյուրը, – ասում է Այլոշա Հայրապետյանը, **– առաջին հերթին կարևոր է իմանալ, թե ինչ դիրքում է եղել գտածոն, եղել են, արդյո՞ք, այլ մասեր, բեկորներ ևս: Հույս ունենք, որ ԶԼՄ-ների անդրադարձից հետո այդ մարդը կամ նրա հարազատները կարձագանքեն, քանզի նոր տեղեկությունները նոր ուսումնասիրությունների հիմք կարող են դառնալ:**

Տիգրանուհի Բաղալյան

> *Թանգարանի տնօրեն Այլոշա Հայրապետյանի խոսքով՝ կասկածն առաջացել է, երբ ձեռքով շոշափել է եղջյուրը և զգացել, որ դրա ոսկրանյութը չափազանց կարծր է, հետևաբար՝ չափազանց հին:*

10 միֆ ամրագոտիների մասին

Ամրագոտիների շուրջ վեճերը չեն հանդարտվում, չնայած երկար պատմությանը և այս սարքերի շնորհիվ ճանապարհատրանսպորտային պատահարների ժամանակ կյանքեր փրկելու՝ հաստատված փաստերի հսկայական քանակին:

Միֆերը, որոնք առաջանում են վարորդների շրջանում, արագորեն տարածվում են, և դրանք դժվար է տարբերել իրականությունից: Բայց հավատալով անհիմն ասեկոսեներին՝ դուք վտանգի տակ եք դնում ձեր կյանքն ու առողջությունը: Ուստի պարզապես անհրաժեշտ է իմանալ ամրագոտիների մասին ճշմարտությունը, և մենք կփորձենք օգնել ձեզ տարանջատել իրականությունն ու միֆերը:

Միֆ 1 Եթե վթարի ժամանակ մեքենան բռնկվի, ապա ամրագոտին թույլ չի տա դուրս գալ մեքենայից: Սկսենք նրանից, որ մեքենաները շատ հազվադեպ են բռնկվում բախման ժամանակ: Այս հնարքն օգտագործվում է կինոռեժիսորների կողմից՝ էկրանային պատահարներն ավելի տպավորիչ դարձնելու համար: Իրական կյանքում և գործնականում երբեք այդպես չի լինում: Բացի այդ, ամրագոտիների ճարմանդները շատ հեշտությամբ են բացվում, և միայն թափքի դեֆորմացիան կարող է դժվարացնել մեքենայից դուրս գալը:

Միֆ 2 Վթարի դեպքում մեքենայից դուրս թռչելը շատ ավելի անվտանգ է, քան գոտուց կախվելը: Շատ վնասակար միֆ, որը հղի է մահացու վտանգով՝ դրան հավատացողների համար: Մեքենայի ապակիները չափազանց ամուր են, որպեսզի դրանք պարզապես կոտրվեն: Մեծ արագությամբ բախվելով դրանց՝ կարող եք կոտրել ձեր գանգը, պարանոցի ողերը և կողոսկրերը: Նույնիսկ եթե պատուհանները կոտրվում են հարվածից, ապա վտանգ կա՝ դրանց սուր բեկորների մեջ հայտնվելու: Իսկ ▶16

ԿԱՄԱԶ-ը ցուցադրել է իր առաջին հեռակառավարվող ավտոինքնաթափը

ԿԱՄԱԶ ավտոմոբիլային գործարանը ցուցադրել է իր առաջին հեռակառավարվող ավտոինքնաթափը: Նրա արդյունաբերական ինդեքսը 6559 է, իսկ հատուկ անունը՝ «Յուպիտեր 30»: Նոր արտադրանքի հիմնական խնդիրն է տեղափոխել թուլացած ապարների զանգվածը կամ հանքաքարը ծանր բեռնատար մեքենաների և էքսկավատորների համար վտանգավոր վայրերում:

Նախատիպի կրողունակությունը, որը ԿԱՄԱԶ-ը ցուցադրել է Աստանայում՝ Inniprom ցուցահանդեսում, հասնում է 27 տոննայի, և այն վարում է հիբրիդային էլեկտրականը: 11,9 լիտր ծավալով վեց մխոցանի շարժիչը շարժում է էլեկտրական գեներատորը, որը էներգիա է ապահովում քարշիչ շարժիչների համար և լիցքավորում է քաշող մարտկոցները:

Ինքնաթափ բեռնատարում կա երկու էլեկտրական շարժիչ՝ յուրաքանչյուր առանցքի համար՝ մեկական: Սա թույլ է տալիս մեքենային օգտագործել լիաքարշակ՝ փոխանցման տուփի բացակայության դեպքում: Բայց շասսին ոչ միայն լիաքարշակ է, այլև լիովին կառավարվող՝ բոլոր անիվները կարող են պտտվել:

Տարածքում սարքը կողմնորոշվում է փոշուց, կեղտից, խոնավությունից և թրթռումներից պաշտպանված տեսախցիկների՝ 2D և 3D-լիդարների, ուլտրաձայնային սենսորների և ռադարների միջոցով: Հաղորդակցությունն ապահովում են GSM ալեհավաքները, իսկ նավիգացիան՝ GPS/GLONASS համակարգերը:

Բեռնատարը ներկայումս փորձարկվում է ԿԱՄԱԶ գիտատեխնիկական կենտրոնում, իսկ 2024 թվականի սկզբին այն կհանձնվի փորձնական շահագործման:

Տեսանյութը դիտելու համար սքանավորեք QR կոդը

15 ասֆալտին նման արագությամբ վայրէջք կատարելով՝ մարդու օրգանիզմը շատ հաճախ կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներ է ստանում:



ՄԻՖ 3 Դանդաղ վարելիս պետք չէ ամրագոտի կապել: Անգամ 50 կմ/ժ արագությամբ վարելիս, դիմապակուն գլխով հարվածելու դեպքում 10 վարորդներից 9-ը մահանում է: Իսկ 30 կմ/ժ արագության դեպքում՝ վնասվածքներ ստանում:

ՄԻՖ 4 Դուք կարող եք չօգտագործել ամրագոտին կարճ տարածություններ երթևեկելիս: Եթե հավատում եք միֆին, որ առանց ամրագոտի կապելու կարճ տարածություններ վարելն անվտանգ է, կարող եք երկար ժամանակով հայտնվել հիվանդանոցում: Վիճակագրությունը, որի հետ դժվար է վիճել, պնդում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարների 75%-ը տեղի է ունեցել վարորդի բնակության վայրից 40 կմ հեռավորության վրա:

ՄԻՖ 5 Անվտանգության բարձիկները փոխարինում են ամրագոտիներին: Այս սարքերը լրացնում են միմյանց, բայց չեն փոխարինում իրար: Որպեսզի ձեզ պաշտպանեն կոշտ մակերեսին հարվածելուց, օդային բարձը փչվում է մի քանի վայրկյանում: Դրա բացման արագությունը 300 կմ/ժ է, մարդու համար նման հարվածը կարող է վտանգավոր լինել:

ՄԻՖ 6 Հետևի նստատեղերին նստած ուղևորները պարտադիր չէ, որ ամրագոտիներ կապեն: Ուժեղ արագությամբ վթարի դեպքում ամրագոտիներով չամրակապված ուղևորները անկառավարելի շարժվում են մեքենայի սրահով: Միևնույն ժամանակ նրանք բախվում են միմյանց և կոշտ մակերեսներին ու կարող են դուրս թռչել մեքենայից: Այսպիսով, սա նույնպես միֆ է, ոչ թե՝ ճշմարտություն:

ՄԻՖ 7 Երեխաներին կարելի է կապել սովորական ամրագոտիներով կամ գրկում պահել: Մեծահասակների համար նախատեսված ժապավենները չեն կարողանա լիարժեք ապահովել երեխային: Իսկ կենտրոնախույս ուժը, որն առաջանում է բախման ժամանակ, այնքան մեծ է, որ բառացիորեն կպոկի երեխային ձեր ձեռքերից, նույնիսկ եթե դուք ինքներդ ամրակապված եք: Ուստի մի հավատացեք առասպելներին և տեղափոխեք երեխաներին միայն մասնագիտացված նստատեղերով:

Ըստ ճանապարհատրանսպորտային պատահարների զոհերի մասին հաղորդումների, զոհվածների 92%-ը բախման պահին ամրագոտի չի կապել:

Անգամ 50 կմ/ժ արագությամբ վարելիս, դիմապակուն գլխով հարվածելու դեպքում 10 վարորդներից 9-ը մահանում է: Իսկ 30 կմ/ժ արագության դեպքում՝ վնասվածքներ ստանում:

ՄԻՖ 8 Գոտիները կարող են ձեզ լրջորեն վնասել վթարի ժամանակ: Եթե դրանք ճիշտ կարգավորվեն, դա երբեք տեղի չի ունենա: Բայց ձեր հասակին սխալ հարմարեցված ժապավենները կարող են կոտրել ձեր պարանոցը: Լուրջ բախումների դեպքում մարմնի վրա կարող է առաջանալ հեմատոմա կամ ժապավենից այրվածք: Բայց սա չափազանց փոքր վնաս է, համեմատած այն վտանգի հետ, ինչից նրանք պաշտպանում են:

ՄԻՖ 9 Անվտանգության գոտիները պիտանելիության ժամկետ չունեն: Արտադրողները պետք է նշեն արտադրության ամսաթիվը և առաջարկեն սարքը փոխարինել առնվազն 10 տարին մեկ անգամ: Այս ժամանակահատվածից հետո ժապավենը կարող է կորցնել իր ամրությունը, և որոշ մեխանիզմներ կարող են ձախողվել: Բացի այդ, դժբախտ պատահարից հետո անհրաժեշտ է փոխել ամրագոտիները:

ՄԻՖ 10 Նրանք անհարմար են և դժվարացնում են մեքենա վարելը: Ցավոք, այս միֆը դարձել է շատ վարորդների սիրելի արդարացումը: Բայց ժամանակակից դինամիկ սարքերը բոլորովին չեն սահմանափակում շարժումը. պտուտակն ինքնաբերաբար թուլանում և փաթաթում է ժապավենը, ինչը հնարավորություն է տալիս ազատորեն շրջվել և հասնել անհրաժեշտ առարկաներին:
Եթե հետևեք ճանապարհատրանսպորտային պատահարների զոհերի մասին հաղորդումներին, ապա կտեսնեք, որ զոհվածների 92%-ը բախման պահին ամրագոտի չի կապել: Այնպես որ, հոգ տարեք ձեր և մեքենայում ձեր կողքին գտնվող մարդկանց մասին՝ անպայման օգտագործեք ամրագոտիներ և մի հավատացեք վտանգավոր միֆերին: